ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.

ք.Գավառ 20 հունիսի 2019թ.

Սույն թվականի հունիսի 20-ին ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար վառելիք ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-19/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՖԼԵՇ» ՍՊԸ–ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ն. Ա. Կուտուզյանը, հաձնաժողովի անդամներ՝ Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Տ. Հ. Զաքոյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրաված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊԸ –ին:
- Առաջարկել «ՖԼԵՇ» ՍՊԸ–ին հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- Սույն արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ չի կիրառվում՝ միայն մեկ մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հիմքով:
- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետներում

ներկայացնելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

հանձնաժողովի նախագահ՝ Ն. Ա. Կուտուզյան

հանձնաժողովի անդամ՝ Լ. Գ. Սիրունյան

հանձնաժողովի անդամ՝ Խ. Ժ. Սաֆարյան

հանձնաժողովի անդամ՝ Տ. Հ. Զաքոյան

հանձնաժողովի անդամ՝ Ս. Պ. Կարապետյան

հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Բ. Ղարաբաղցյան